Բաժիններ

Այն թվերը, որոնցով նշանակվում է մեկը բնական թվի բաժանելու արդյունքը, կոչվում են բաժիններ և գրի են առնվում հետևյալ կերպ.

$\frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{1}{4}, \frac{1}{5}, \frac{1}{6}, \ldots$

Այսինքն՝ բաժինները այն կոտորակներն են, որոնց համարիչը 1 է, իսկ հայտարարը բնական թիվ:

Ինչպես են կարդացվում բաժինները՝

Օրինակներ ՝ $\frac{1}{2}$-ը կարդացվում է՝ մեկ երկրորդ

$\frac{1}{3}$-ը կարդացվում է մեկ երրորդ




1/3
1/3
1/3


1/4
1/4
1/4
1/4

Առաջադրանքներ

1. **Կարդացեք**

ա) $\frac{1}{9}$ մեկ իներորդ

բ) $\frac{1}{18}$ մեկ տասնութերորդ

գ) $\frac{1}{2000}$ մեկ երկու հազարյերուրդ

2. Գրեք թվանշաններով

ա)Մեկ հինգերորդ 1/5

բ)Մեկ տասներեքերորդ 1/13

գ)Մեկ յոթհազարերորդ 1/7000

դ)Մեկ հինգհազարերորդ 1/5000

3. **Միավորը բաժանված է 8,12,36,400,1001 հավասար մասերի: Ինչպե՞ս է կոչվում հավասար մասերից մեկը այդ դեպքերից յուրաքանչյուրում: 1/8, 1/12 1/36 1/400 1/1001**
4. **Ուղղանկյան մակերեսի ո՞ր մասն է գունավորված:**



1/4



1/5

5. Տրված թվերից առաջինը երկրորդի ո՞ր մասն է

ա) Ռոպե և ժամ 1/60

բ)օր և շաբաթ 1/7

գ) միլիմետր և սանտիմետր 1/10

դ)կիլոգրամ և տոննա 1/1000

ե)միլիմետր և սանտիմետր 1/10

6. Քանի ռոպե է

ա) կես ժամը 30

բ)քառորդ ժամը 15

գ) $\frac{1}{12}$ ժամը 5

դ) $\frac{1}{5}$ ժամը 12

7. Անոթում տեղավորվում է 600գ ջուր: Այդ անոթի ո՞ր մասը պետք է լցնել, որպեսզի նրա մեջ լինի 150գ ջուր:

1/4